ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՄՏԻԲՆ-ՇՀԱՊՁԲ-17/8-2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայանագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կարիքների համար տոներային քարթրիջների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.04.2017թ. ժամը 11:00-ին ք. Երևան Տիգրման Մեծ 4 հասցեում:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ապրիլի 10-ին ժամը 11:00 Տիգրման Մեծ 4 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղազարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Ա.Ազիզյանը, Ա. Սահակյանը, և քարտուղար Ա. Պողոսյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և ուսումնասիրության մասին

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

   ՄՏԻԲՆ-ՇՀԱՊՁԲ-17/8-2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ղազարյանը տեղեկացրեց, որ ՄՏԻԲՆ-ՇՀԱՊՁԲ-17/8-2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

   1. Ռետրո Ֆիլինգս ՍՊԸ ք. Երևան, Անտառային Փ. 120S
   2. Էն գրուպ ՍՊԸ ք. ՀՀ, ք. Արմավիր, Մանուշյան փ., տ.20

2. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

   Ռետրո Ֆիլինգս ՍՊԸ, Էն գրուպ ՍՊԸ, կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես պիտանի հայտեր:

3. **Ապրանքի նախահաշվային գինը և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

Տոներային քարթրիջների նախահաշվային գինը կազմում է համար 990 000 ՀՀ դրամ

ՀՀ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	
		Ռետրո Ֆիլինգս ՍՊԸ	Էն Գրուպ ՍՊԸ
1	Տոներային քարթրիջ	981 000	660 000

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Էն գրուպ ՍՊԸ կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում բացակայում է հրավերով սահմանված փաստաթղթերից՝ տեխնիկական չափորոշիչը՝ հավելված 3.4-ը: Ռետրո Ֆիլինգս ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը

4.Հանձնաժողովը որոշեց՝

մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, և դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Էն գրուպ ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղազարյան

Անդամներ՝ Ա.Սահակյան

Ա.Ազիզյան

Քարտուղար՝ Ա.Պողոսյան